



Primacy of the Armenian Apostolic Orthodox Church  
of the United Kingdom and Republic of Ireland

His Grace Bishop Hovakim Manukyan, Primate

## Saint Yeghiche Armenian Church Parish Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծով

Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan

13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB

Registered Charity No 1173403

Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. [info@styeghiche.org.uk](mailto:info@styeghiche.org.uk)  
[www.styeghiche.org.uk](http://www.styeghiche.org.uk) <https://www.facebook.com/StYeghiche>

## SUNDAY BULLETIN

1: Today's Scripture Reading,

18th July 2021

Bulletin 30/2021

### Second Sunday of Transfiguration

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ 1 ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻՆ ԳՐՈՒԱԾ ՆԱՍԱԿԷՆ  
1:25-30

Որովհետեւ Աստուծոյ յիմարութիւնը մարդոցմէ աւելի իմաստուն է, եւ Աստուծոյ տկարութիւնը մարդոցմէ աւելի ուժեղ է:

Արդարեւ դուք կը տեսնէք ձեր կոչումը, եղբայրներ, թէ ի՞նչպէս ո՛չ թէ շատ իմաստուններ՝ մարմինի համեմատ, շատ գորաւորներ, շատ ազնուականներ կանչուեցան, հապա Աստուած ընտրեց աշխարհի յիմարները՝ որպէսզի ամօթահար ընէ իմաստունները: Աստուած ընտրեց աշխարհի տկարները՝ որպէսզի ամօթահար ընէ հզօրները: Աստուած ընտրեց աշխարհի ստորինները, անարգուածներն ու բա՛ն մը չեղողները, որպէսզի ոչնչացնէ բա՛ն մը եղողները: որպէսզի ո՛չ մէկ մարմին պարծենայ Աստուծոյ առջեւ: Բայց դուք Քրիստոս Յիսուսով անկէ՛ եք, որ Աստուծմէ մեզի համար իմաստութիւն, արդարութիւն, սրբութիւն եւ ազատագրութիւն եղաւ:



### The Epistle of St Paul to the 1 Corinthians 1:25-30

Paul Writes to Corinthians

For the foolishness of God is wiser than human wisdom, and the weakness of God is stronger than human strength.

Brothers and sisters think of what you were when you were called. Not many of you were wise by human standards; not many were influential; not many were of noble birth. But God chose the foolish things of the world to shame the wise; God chose the weak things of the world to shame the strong. God chose the lowly things of this world and the despised things—and the things that are not—to nullify the things that are, so that no one may boast before him. It is because of him that you are in Christ Jesus, who has become for us wisdom from God—that is, our righteousness, holiness and redemption.

### Our Aim;

St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.

## 2: A short interpretation of the Scripture reading

### ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 18:10-14

«Ուշադիր եղէք որ չարհամարիէք այս պգտիկներէն մէկը. քանի որ կ'ըսեմ ձեզի թէ երկինքի մէջ անոնց հրեշտակները ամէն ատեն կը տեսնեն երեսը իմ Հօրս՝ որ երկինքն է: Որովհետեւ մարդու Որդին եկաւ կորսուածը փրկելու:»

Ի՞նչ է ձեր կարծիքը. եթէ մարդ մը ունենայ հարիւր ոչխար եւ անոնցմէ մէկը մոլորի, իննսունինը ոչխարները լեռները չի՞ թողուր ու՞ երթար՝ փնտռելու մոլորածը: Եթէ պատահի որ գտնէ զայն, ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի թէ ասելի՛ կ'ուրախանայ անոր համար, քան իննսունինին՝ որոնք մոլորած չէին: Այսպէս՝ ձեր երկնաւոր Հայրը չի հաճիր որ այս պգտիկներէն մէկը կորսուի»:

### The Holy Gospel of Jesus Christ according to Matthew 18:10-14

#### The Parable of the Wandering Sheep

“See that you do not despise one of these little ones. For I tell you that their angels in heaven always see the face of my Father in heaven. For the Son of Man has come to save that which was lost.

“What do you think? If a man owns a hundred sheep, and one of them wanders away, will he not leave the ninety-nine on the hills and go to look for the one that wandered off? And if he finds it, truly I tell you, he is happier about that one sheep than about the ninety-nine that did not wander off. In the same way your Father in heaven is not willing that any of these little ones should perish.

### Ս. Թադէոս առաքյալի և Ս. Սանդուխտ կույսի հիշատակության օր

Ս. Թադէոս առաքյալը և Ս. Սանդուխտ կույսը Հայ Եկեղեցու ամենանշանավոր տոնելի սրբերից են, քանի որ նրանց անվան հետ է առնչվում հայոց լուսավորության պատմությունը:

Քրիստոսի Համբարձումից հետո, համաձայն Տիրոջ պատգամի՝ «Գնացէք, ուրեմն աշակերտ դարձրէք բոլոր ազգերին, նրանց մկրտեցէք Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով» (Մատթ. 28:19), Թադէոսը նախ գալիս է Եդեսիա, ավետարանում կենաց խոսքը, ի թիվս բազում հրաշքների բժշկում նաև Աբգար թագավորին, ապա՝ իրեն փոխարինող նշանակելով Եդեսիայում, գնում է Հայոց Սանատրուկ արքայի տիրույթները: Այստեղ զանազան վայրեր քարոզելուց հետո բազմաթիվ հեթանոսների է քրիստոնեական հավատի բերում և հիմնադրում Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին: Գալով Արտազ գավառ, առաքյալը մտնում է հայոց արքունիք և դարձի բերում արքայադուստր Սանդուխտ կույսին:

Իրազեկ դառնալով այս ամենին, Սանատրուկ հայոց արքան սկզբում հորդորում է դստերը ետ դառնալ նախկին հավատին, սակայն՝ ապարդյուն: Չայրացած արքան թե՛ Թադէոս առաքյալին, թե՛ Սանդուխտ կույսին նետում է բանտ և դաժան տանջանքների ենթարկում: Արքունի իշխանագուն կառավարչի միջոցով արքայադստերը տարհամոզելու վերջին փորձը ևս ապարդյուն է անցնում: Քրիստոնյա է դառնում նաև կառավարիչը: Ի վերջո, արքայի հրամանով Ս. Թադէոս առաքյալը և Ս. Սանդուխտ կույսը նահատակվում են արքայական ամառանոց Շավարշավան գյուղաքաղաքում: Հայ Եկեղեցին Ս. Թադէոս առաքյալի հիշատակը տարվա մեջ ոգեկոչում է երկու անգամ, նախ՝ Ս. Բարդուղիմեոս առաքյալի, ապա՝ Ս. Սանդուխտ կույսի հետ:

### Commemoration of the Apostle Thaddeus and the Virgin Sandoukht

St. Thaddeus the Apostle and St. Sandoukht the Virgin are two of the most venerated saints in the Armenian Church, as the “Great Conversion” of the Armenian nation to Christianity is significantly connected with their names.

Following the Ascension of Christ, according to the Lord’s message: “Go then to all peoples everywhere and make them make them my disciples...”, Thaddeus departs for Edessa. There he preaches the Gospel, and among his numerous miracles, also heals the king of Osrhoene named Abgar. In the year 44 A.D., Thaddeus travels on to Armenia and enters the domain of the pagan King Sanatrouk. After preaching in various parts of Armenia, St. Thaddeus converts many to Christianity, who become the foundation for the Armenian Church. The Apostle Thaddeus, while in the region of Artaz, gains access to the royal palace and converts Princess Sandoukht, the daughter of the king, to Christianity.

The Armenian King Sanatrouk becomes aware of his daughter’s conversion and exhorts her to return to her native heathen religion, but his efforts are in vain. The enraged king imprisons both the Virgin Sandoukht and St. Thaddeus and subjects them to severe torments. Another effort is made to persuade the Virgin to give up Christianity by the governor of the royal palace, an Armenian prince. This effort only ends with the prince becoming a Christian as well. The king, able to bear no more, finally orders the death of the Apostle Thaddeus and his own daughter, Sandoukht. They are martyred together in Shavarshan, the summer residence of the royal family.

### 3: This week's message from our Priest in Charge

#### Մեկնութիւն եւ հոգեւոր պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն:

**Ո՛ՐԾ Է ՓՆՏՐՈՒՄ ԱՍՏՈՒԱԾ, Ո՛Վ Է ԿՈՐՍՈՒԱԾԸ...**

Իսկապէս, ո՛վ է կորածը, որ կարիք ունի գտնուելու, ո՛վ է մոլոր ճամբաների վրայ խճճուածը, որ օգնութեան պէտք ունի, **«..որովհետեւ մարդու Որդին եկաւ՝ փրկելու կորածին»** (Մատթ. 18:11):

Գիտեմ, որ շատերի մտքին անմիջապէս թերեւս անառակ որդու կերպարը գայ, որեւէ ակնյայտ մեղքի մէջ խրուած մեղաւոր, շատերին տեսանելի մեղքով առանձնացած մէկը: Իսկ իրականում այդ կորածը մենք ենք, հաւաքականօրէն մէկի մէջ խտացուած ամբողջ մարդկութիւնը: Մա հասկանալու համար պէտք է հասկանալ, թէ ովքե՛ր են այն իննսուինը: Մեկնիչ վարդապետները լերան վրայ մնացած իննսուինը ոչխարներ ասուածի տակ հրեշտակաց դասն են տեսնում: Նրանք երկնքի բարձունքում են, ապահով արօտավայրում, Տիրոջ հարկի ներքոյ: Լեռը Աստծոյ արքայութեան, Նրա բնակութեան ու ներկայութեան խորհրդանիշն է: Այդ լեռը թողեց Քրիստոս, այնտեղ իննսուինին թողնելով իջաւ՝ խոնարհուեց Իր աստուածութեան բարձունքից, որպէսզի փնտրի եւ փրկի կորած ՄԱՐԴՈՒՆ:

Այս հատուածը մեզ սովորեցնում է, որ իրականում Քրիստոս ի՛նքն է կորսուած մարդու ետեւից գնում եւ ոչ թէ մոլորուած մարդը՝ Տիրոջ ետեւից: Մա Իր խոստման կատարումն է: Դրա համար է ասում. «Ձեզ ինչպէ՛ս է թոււմ... չի՛զնայ մոլորուածին որոնելու»: Մարդն իրենով չի կարող գտնել այդ ճանապարհը, վկան՝ շատ փիլիսոփաների եւ գիտնականների ինքնասպան մահերն ու իրենց ապրելու իմաստի անարդիւնք որոնումները: Ինքը՝ Աստուած սիրեց մեզ մեր ծնուելուց առաջ, քանի որ փրկութեան խոստումը տրուեց, երբ դեռ երկու մարդ կար աշխարհում...

Քրիստոս թողեց երկինքը՝ փնտրելու մոլորուածին, քանի որ կորսուածը ինքը չգիտի վերադարձի ճանապարհը, աւելին՝ չի կարող էլ գտնել առանց Փրկչի:

Քրիստոս երկնքից իջաւ փնտրելու՝ ցոյց տալով, որ եթէ Ինքը չփնտրի եւ չգտնի, մոլորուածը ուղղակի երբեք չի կարող փրկուել:

Աստուած ինքը փնտրեց արդեն մեղանշած Ադամին ու Եւային «Ո՛ր ես» կանչելով, Բարի Մամարացու կերպարի տակ Ինքն է, որ գնաց ու գտաւ մեղքից վիրաւոր ու սատանայից թալանուած մարդուն, Ինքը կանչեց մաքսաւոր Դևիին ու ծառի վրայ ելած Չակքէոսին մաքսապետին, ձկնորսութիւն անող Անդրէասին, Պետրոսին եւ միւս առաքելներին:

Այժմ էլ Քրիստոս մեզ է եկել Աւետարանի խօսքով, եկեղեցու զանգակով, խորանից եկող քարոզով, հոգեւոր երգով ու աղօթքով: Մենք պիտի որոշենք՝ ձայն տա՞նք մեր տկարութեան ու փորձութեան միջից, խճճուած, մեղքի ճամփաների մէջ մոլորուած, Աստծոյ աչքից յեռացած վիճակից:

Աստծո սիրո կանչին մեր պատասխանը ուրախացնելու է Աստծուն եւ հրեշտակներին, կորսուածին գտած Քրիստոս Իր ուսերի վրայ առած է կրկին «տուն» վերադարձում, ուր ուխանալու է աւելի, քան իննսուինին վրայ, որոնք մոլորուած չեն: Աստուած չի ուզում ոչ ոքի մոլորուած մնալը, կորսուելը, այլ որ բոլորը փրկուեն: Չէ՞ որ Աստուած Հայր է մեր հոգիների եւ մեզ իբրեւ Իր զաւակների է մօտենում:

**«Այսպէս իմ երկնաւոր Հօր կամքը չէ, որ այս փոքրիկներից մէկը կորչի»** (Մատթ. 18:14):

Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհը, Աստծու սէրը եւ Սուրբ Հոգու հաղորդութիւնը ձեզ հետ լինեն: Ամէն:

**Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան**

**ՏՕՆ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ**

*Կիրակի, Օգոստոս 15, 2021*

Անոնք որոնք կը փափաքին Սր Աստուածծնի վերափոխման տօնին առթիւ իրենց արտագին նուիրատուութիւնները ընել փոխան խաղողի, թող հանին մոտենալ Ծովսի Հոգաբարցութեան կամ հեռանայնէ եկեղեցւոյ գրասենեակը **020 7373 8133**.

**Ձեր ուխտը ընդունելի ըլլայ:**

**Assumption of the Holy Mother-Of-God**

*Sunday 15th August 2021*

*All those wishing to donate grapes or make monetary donations in lieu of grapes, please contact the Parish Council members at church or call parish office **020 7373 8133**.*

**Thanking you in advance ,**

**St Yeghiche Armenian Church Parish Council**

Safeguarding and Health and Safety issues are taken seriously by Saint Yeghiche Armenian Church, copies of the policy document are available for view, for any related issues please report or contact members of the parish council.



#### 4: Հոգեհանգիստ - Memorial Service

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

By Raffi and Arshalouys Babayan and Family for the soul of their Sister, Aunt and Great Aunt the late **VARTANOOSH JINDOIAN** who passed away recently in Chicago U.S.A, also for all the old and new deceased members of the **JINDOIAN** and **BABAYAN** Families.

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit

**Please Pray For Our Sick:** Please notify the Pastor whenever you know of anyone who is sick, whether at home or in the hospital. Let us pray for one another

**Rev Fr Nshan Alaverdyan** is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan at 07548 777 147.

Ձեր ամեն տեսակի հոգևոր կարիքներուն եւ Խորհրդակատարութիւններուն՝ Տնօրինէի, հիւանդի այցելութեան, Սբ Հաղորդութեան ստանալու եւ այլ խնդրանքներուն համար դիմեցէք Եկեղեցի 020 7373 8133, կամ ուղղակի հեռաձայնեցէք Հոգևոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ավագերդեանին 07548 777 147:

#### ENQUIRIES:

For ecclesiastical/parish matters including requests for Christenings, Home Blessing (Dnorhnek), Donations in Lieu of Flowers, arrangements for Marriages and other church administrative matters please contact Mr Viken Haladjian, phone: **07970 146 280** or **020 7373 8133** or by emailing [info@styeghiche.org.uk](mailto:info@styeghiche.org.uk) Alternatively please approach a member of the Parish Council at church every Sunday after Badarak.

#### Requiem Service (Hokehankisd)

For Requiem Service (Hokehankisd), please call the church office at **020 7373 8133**, or e-mail us your request to [info@styeghiche.org.uk](mailto:info@styeghiche.org.uk) by Thursday, in order to include the name(s) of your beloved one(s) in the Sunday bulletin. There is no set monetary amount for requesting Hokehankisd; any amount donated is appropriate and appreciated. **Please remember our Church in your prayers.** *Your kind donations are gratefully accepted:*

#### ANNOUNCEMENT:

St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the side entrance desk of the Church or visit our website [www.styeghiche.org.uk](http://www.styeghiche.org.uk)

We welcome your donations for prayers and support towards church annual expenses. **May the Lord bless you and your family, keep you away from all harm and fulfil all your prayers and dreams.**

-You may send in your donations as follows: Please post your cheques to: St Yeghiche Armenian Church Parish, 13b Cranley Gardens, Kensington, London, SW7 3BB. Please make your cheques payable to: **“St Yeghiche Armenian Church”**.

-You can also pay by bank transfer to St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at: HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F

-Alternatively you may use our QR Code which will enable you to make donations directly to the Church PayPal account. Please scan this QR Code to make your electronic weekly, monthly or periodical contributions. *Thank you.* **St Yeghiche Armenian Church Parish Council**

**St Yeghiche Armenian Church is a Registered Charity, Reg No 1173403. Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.**

